***Կարգապահական գործ թիվ ԿԳ-15171***

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2016 թվականի մարտի 01-ի թիվ 28-րդ ԿԳ նիստի

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/22-Ա**

**ՓԱՍՏԱԲԱՆ ԳԱՐԻԿ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Կարեն Մեժլումյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Հարություն Հարությունյանի, Նելլի Հարությունյանի, Լուսինե Սահակյանի, Կարեն Սարդարյանի, Երվանդ Վարոսյանի, Մարտուն Փանոսյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Գարիկ Սահակյանին (արտոնագիր թիվ 1740) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

***Պ Ա Ր Զ Ե Ց՝***

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը</u>.**

Քաղաքացի Ալիս Սարգսյանը (**այսուհետ՝ նաև Դիմող**)՝ դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ՝ Պալատ**)՝ հայտնել է, որ բախվել է անարդարության փաստաբան Գարիկ Սահակյանի ոչ լիարժեք գիտելիքների, ինչպես նաև իր գործում պասիվ և անտարբեր լինելու պատճառով:

Դիմողը նշել է, որ 13.03.2015 թվականին դատարանից ստացել է փաստաթուղթ, որտեղ փորձագետներին առաջադրված են եղել 5 հարցեր: Դիմողը զանգահարել է փաստաբան Գարիկ Սահակյանին, նրան տեղյակ է պահել նշված փաստաթուղթը ստանալու մասին, որին ի պատասխան փաստաբանն ասել է, որ գիտի, նա էլ է ստացել:

Դիմողը որոշ ժամանակ անց տեղեկացել է, որ կարող էր դիմում գրել դատարանին և մինչև վարույթը կասեցնելը ևս մեկ կետ ավելացնել, որը վերաբերվում էր նախկինում գտնվող մուտքի դարպասի ծխնիներից մեկին, որը մինչև հիմա կա: Դիմողը նաև պարզել է, որ դա պետք է գրվեր 3 օրվա ընթացքում, իսկ երբ Դիմողի դուստրը փաստաբանին ասել է այդ մասին, ստացել են «կներես» պատասխանը:

Դիմողը նաև նշել է, որ բազմիցս զանգել է փաստաբանին, նա կամ չի պատասխանել զանգերին, կամ էլ ասել է, որ զբաղված է: Համոզվելու համար, թե արդյո՞ք փաստաբանն իրոք զբաղված է, Դիմողն ուրիշ համարից է զանգահարել նրան, իսկ փաստաբանն այդ զանգին անմիջապես պատասխանել է:

Ըստ Դիմողի՝ վերջինս շարունակաբար փորձել է կապ հաստատել փաստաբանի հետ, իսկ նա կրկին չի պատասխանել: Երբ Դիմողը մի քանի անգամ շարունակաբար

զանգել է փաստաբանին, փաստաբանը Դիմողի դստերը հաղորդագրություն է ուղարկել *«Ես քաղաքում չեմ, մամայիդ ասա չզանգի»* տեքստով:

Դիմողը նաև հայտնել է, որ երկու դատական նիստերին փաստաբանն ուշացումով է գնացել, իսկ երրորդ դատական նիստին Դիմողի տղան է նրան մեքենայով ուղեկցել, որպեսզի նիստից չուշանա:

Դիմողը 11.06.2015թ. ստացել է փորձագետի եզրակացությունը, երբ փաստաբանն իմացել է այդ մասին ասել է, որ քաղաքում չէ, վաղն իր հանգստյան օրն է, իսկ երկուշաբթի կարող են հանդիպել:

Դիմողն անհանգստացած լինելով, դիմել է այլ մասնագետների և տեղեկացել է, որ փորձագետի եզրակացությունն իրենց համար դրական չէ, ինչպես նաև տեղեկացել են այն մասին, որ իրենք փորձաքննության կարիք չունեին և դրա համար անիմաստ վճարել են, իսկ փաստաբանն այդ մասին Դիմողին չի ասել:

Դիմողը նշել է, որ փաստաբան Գարիկ Սահակյանի հետ կնքված պայմանագրով սահմանվել է 500 ԱՄՆ դոլարին համարժեք դրամի վճարում, որով փաստաբանը խոստացել էր հարկ եղած դեպքում գործը հասցնել նաև վերաքննիչ և վճռաբեկ դատարան, սակայն գործը չի ավարտել նույնիսկ առաջին ատյանի դատարանում:

Դիմողը նաև նշել է, որ իր դուստրը փաստաբան Գարիկ Սահակյանին տեղյակ է պահել, որ չեն ուզում աշխատել իր հետ և առաջարկել է իր կատարած աշխատանքի դիմաց վերցնել համապատասխան գումար, իսկ չկատարածի համար վերադարձնել մնացած գումարը, սակայն փաստաբանը համաձայնվել է վերադարձնել 35.000 ՀՀ դրամը և ասել է, որ եթե նորից զանգահարեն, նա կդիմի ոստիկանություն:

Ալիս Սարգսյանի կողմից ներկայացվել են «Ռայթ Փրոթեքթ» ՍՊԸ հետ 11.06.2014թ. փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրի, Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ «Դատատեխնիկական փորձաքննություն նշանակելու և գործի վարույթը կասեցնելու մասին» 10.03.2015թ. որոշման և նույն դատարանի՝ «Գործի կասեցված վարույթը վերսկսելու և դատական նիստ նշանակելու մասին» 08.06.2015թ. որոշման պատճենները:

Դիմողն, ըստ էության, փաստաբան Գարիկ Սահակյանին վերագրում է հետևյալ արարքների կատարումը՝

- ***փաստաբան Գարիկ Սահակյանը Դիմողին բարեխիղճ իրավական օգնություն ցույց չի տվել և չի ապահովել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը.***
- ***փաստաբան Գարիկ Սահակյանը խուսափել է Դիմողի հեռախոսազանգերին պատասխանելուց.***
- ***Դիմողներին չի վերադարձրել ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարել.***

**2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 16.10.2015թ. թիվ 329-Ա/ԿԳ-15171 որոշմամբ փաստաբան Գարիկ Սահակյանի (արտոնագիր թիվ 1740) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Փաստաբանի վարքագծի Կանոնագրքի 2.7.2, 3.1.8, 3.5.5, 3.6.1 և 3.8.5 (1) ենթակետերի խախտման հատկանիշներով՝ *փաստաբան Գարիկ Սահակյանի կողմից*՝

- *Դիմողին բարեխիղճ իրավական օգնություն ցույց չտալու (ձեռնհասություն չցուցաբերելու), հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը չապահովելու (Կանոնագրքի 2.7.2, 3.1.8, 3.5.5 ենթակետեր),*

– *Դիմողի հեռախոսազանգերի և նրան հետաքրքրող հարցերին չպատասխանելու (Կանոնագրքի* 3.6.1 ենթակետ*) և*
– *Դիմողի գործով փաստացի չկատարած աշխատանքի մասով պայմանագրով ստացած հոնորարը չվերադարձնելու (Կանոնագրքի 3.8.5 ենթակետի 1-ին պարբերություն) վարքագիծը ստուգելու նպատակով:*

Կարգապահական վարույթով դիմող է ճանաչել Ալիս Սարգսյանը:

Կարգապահական գործը 22.10.2015թ.-ին հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Արթուր Մարտիրոսյանին:

**3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>**

**3.1. <u>Դիմողի համառոտ բացատրությունը.</u>**

Դիմողը խորհրդի նիստին չի ներկայացել և բացատրություն չի տվել:

Կարգապահական վարույթի նախապատրաստման ժամանակ դիմողը 12.12.2015թ-ին գրավոր բացատրություն է տվել, նշելով, որ պնդում է իր դիմումը և լրացնելու այլ բան չունի:

**3.2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունը.</u>**

Պատասխանողը Խորհրդի նիստում բացատրություն տվեց այն մասին, որ որպես մասնագետ, իրավաբան, նման միջնորդություն չէր ցանկանում ներկայացնել, քանի որ դրանով կասկածի տակ կդրվեր օրինական ուժի մեջ մտած վճիռը, բացի այդ, պահանջը եղել է նաև ընդհանուր հողամասը հավասար բաժանելու մասին: Ըստ պատասխանողի ինքը այդ միջնորդությունն արել է բացառապես դիմողի պահանջով: Ինչ վերաբերում է դիմողի զանգին ի պատասխան նրա դստերը հեռախոսային կարճ հաղորդագրություն՝ sms ուղարկելուն, ապա այդպես է արել, քանի որ իրեն այդ պահին հարմար չի եղել հեռախոսազանգին պատասխանել, իսկ sms-ը դստերն է ուղարկել, քանի որ կարծել է, որ դիմողը լինելով տարեց կին, հնարավոր է sms-ից օգտվելու տեխնիկայից չկարողանար օգտվել: Ըստ պատասխանողի չի եղել որևէ դեպք, որ նա դիմողի հեռախոսազանգերին չպատասխանի կամ հետ չզանգի: Ինչ վերաբերումը հոնորարի մի մասը չվերադարձնելուն, ապա ըստ պատասխանողի ծառայությունների մատուցման պայմանագիրը չի լուծվել, դիմողն էլ իրեն նման պահանջ չի ներկայացրել, այլ նման պահանջ է ներկայացրել դիմողի դուստրը, որը ոչ իր վստահորդն է և ոչ էլ պայմանագրի կողմ:

Կարգապահական գործը նախապատրաստողի մոտ պատասխանողը բացատրություն է տվել այն մասին, որ. *«11.06.2014թ. փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրով փաստաբան Գարիկ Սահակյանս ստանձվել եմ Ալիս Սարգսյանի շահերի պաշտպանությունը, դատական ներկայացչություն ՀՀ դատական բոլոր ատյաններով: Նշեմ, որ Ալիս Սարգսյանը ԵԱՔԴ /1655/02114 քաղաքացիական գործով հանդիսացել է պատասխանող համատեղ սեփականություն հանդիսացող հողամասից փաստացի տիրապետման հիմքով <u>հողամասը առանձնացնելու</u> **<u>պահանջի մասին շրջանակներում</u>**: **<u>Համաձայն մեր մեջ կնքված պայմանագրով տիկին Ալիս Սարգսյանի անունից, սակայն մտքերից ներկայացրել եմ հակընդդեմ հայցադիմում</u>**, պատճենը ներկայացնում եմ բացատրությանս կից: Դատարանի կողմից նշանակված դատական նիստերին մշտապես ներկայացել եմ, երբեք իմ պատճառով դատական նիստը չի հետաձգվել: Մի քանի դատական նիստերին մասնակցելուց հետո սկզբնական հայցվորի*

*ներկայացուցիչը դատարան ներկայացրեց դիմում հայցի առարկան և հիմքը փոխելու վերաբերյալ: Գարիկ Սահակյանս օրենքով սահմանված կարգով վերոհիշյալ դիմումին ներկայացրել եմ պատասխան: Ձեզ եմ ներկայացնում համապատասխան պատասխանի պատճենը: Այժմ շարունակելով իմ բացատրությունը ցանկանում եմ անդրադառնալ տիկին Ալիս Սարգսյանի դիմումին, ուղղված ՀՀ փաստաբանների պալատի նախագահին:*

*Տիկին Սարգսյանը նշում է, որ ես իր գործով եղել եմ պասիվ, վերջինս դրա վերաբերյալ որևէ հիմնավորում չի ներկայացնում, նշեմ որ դա չի համապատասխանում իրականությանը, մշտապես ջանասիրաբար եմ վերաբերվել վերջինիս գործին: Ալիս Սարգսյանը պնդում է, որ ինձ այլ գործով գումար են առաջարկել, որպեսզի ես գործում լինեմ պասիվ հակառակ կողմին աջակցելու համար, նշեմ որ երբևէ այդպիսի խոսակցություն մեր մեջ չի եղել, և տիկին Սարգսյանի միտքը չի համապատասխանում իրականությանը: Տիկին Սարգսյանը իր դիմումում նշում է, որ դատարանի փորձաքննություն նշանակելու որոշումը ստանալու պահին դրա մասին ինձ տեղյակ է պահել և ես ասել եմ, որ տեղյակ եմ դրա մասին, այո ես տեղյակ եմ եղել, քանի որ դատարանը փորձաքննություն և գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ իր որոշումը կայացրել է դատական նիստի ընթացքում: Դիմողը նշում է, որ կարելի է ևս մեկ կետ ավելացնել, սակայն ինչպես վերը նշեցի դատարանը և փորձաքննություն նշանակելը և գործի վարույթը կասեցնելը իրականացրել է միաժամանակ, ուստի դատավարական առումով գործի վարույթը կասեցնելուց հետո դատարանը ոչ մի միջնորդություն չէր քննարկելու, մինչև դրա կասեցման հիմքերը վերանալը: Նշեմ նաև, որ դատարանը փորձաքննությունը (դատատեխնիկական) նշանակել էր սեփական նախաձեռնությամբ, ոչ հայցվորի որ էլ պատասխանողի միջնորդությամբ: Տեսնելով, որ տիկին Ալիսը պնդում է ևս մեկ հարց, որը վերջինս ցանկանում էր ուղղել փորձագետին մինչև փորձաքննության ավարտը 04.06.2015թ. իմ անունից դատարան եմ ներկայացրել միջնորդություն լրացուցիչ փորձաքննություն նշանակելու մասին: Որտեղ փորձագետին առաջադրել ենք հարցեր, որոնք ներառված չէին դատարանի համապատասխան փորձաքննություն նշանակելու որոշման մեջ, միջնորդության պատճենը ներկայացնում եմ ձեզ: Գործի քննության ամբողջ ընթացքում եռանդով ու ջանասիրությամբ պաշտպանել եմ վստահորդիս շահերը: Հարկ եմ համարում նշել, որ մի քանի ժամ մասնակցել եմ փորձաքննության իրականացմանը ինչպես իմ վստահորդի այնպես էլ հակառակ կողմի տանը, անգամ հանդիպել եմ փորձագետին փորձագիտական կենտրոնում, մի խոսքով իրականացրել եմ այն ամենը ինչ սահմանված էր մեր մեջ կնքված պայմանագրով: Դիմողը նշում է, որ մինչև գործի վարույթը կասեցնելը պետք է ևս մեկ կետ ավելացնել ու նշում է, որ դրա համար մեզ 3 (երեք) օր է տրամադրված եղել, ցանկանում եմ կրկին նշել որ դատարանը փորձաքննությունը և գործի վարույթը կասեցնելը իրականացրել է նույն դատական նիստի ընթացքում և ժամանակին:*

*Դիմողը նշել է, որ իրենք բազմիցս զանգահարել են ինձ և ես չեմ պատասխանել: Ցանկանում եմ ձեզ իրազեկել որ տիկին Ալիս Սարգսյանը ինձ շատ քիչ է զանգել, երբ զանգել է ես պատասխանել եմ, այ իր դուստրը ինձ օրվա ցանկացած ժամին զանգել է անգամ գիշերվա ժամը 1-ին, և եղել են դեպքեր, որ ես դիմողի դստեր Աննա Աղաբալյանի զանգերին չեմ պատասխանել, հաշվի առնելով դրանց կրկնվելու և ոչ պատշաճ ժամին ինձ զանգելու հանգամանքը: Տիկին Սարգսյանը նշում է, որ ինձ զանգել է, ես չեմ պատասխանել, և իր դստերը գրել եմ կարճ sms հաղորդագրություն «ես քաղաքում չեմ մամայիտ ասա չզանգի»: Ցանկանում եմ ձեզ տեղեկացնել, որ այո այս առումով տիկին Սարգսյանը իրավացի է, սակայն այլ կերպ է փորձում ներկայացնել, ես հաշվի առնելով այն հանգամանքը, որ տիկին Ալիսը 60 (վաթսում) անց կին է հնարավոր է չտիրապետի*

*sms հաղորդագրություն կարդալու և վերարտադրելու տեխնիկային, միանգամից միջոց եմ ձեռնարկել իմ իր զանգին չպատասխանելու մասին իրազեկ պահել իր դստերը, որպեսզի վերջինս տեղյակ պահի իր մորը իմ զբաղված լինելու մասին և այն որ վերջինս չանհանգստանա: Նշեմ նաև որ մենք մեր բուհական ընկերներով գնում էինք Սյունիքի մարզի մեր գյուղ մեր կուրսընկերուհու մահվան սգո արարողությանը մասնակցելու համար: Հարկ եմ համարում նշել, որ դեռևս փորձաքննության ավարտված չլինելը, ինձ զանգահարեց տիկին Սարգսյանի դուստր Աննան և ասաց, որ իրենք գտել են մի փաստաբանի, որը իրենց վաղեմի ծանոթն է, ուստի չեն ցանկանում իմ հետ աշխատել, ես նրան ասացի, որ Աննա դու չես վստահորդս այլ մայրտ է, թող վերջինս ինձ այդ փաստի մասին իրազեկի և հետագայում, որոշենք մեր մեջ առկա դրամական հարաբերությունները: Սակայն Աննան պնդում էր, որ ես ետ տամ իրենց գումարը, ես մերժեցի նրան հաշվի առնելով այն հանգամանքը որ նա չէ իմ վստահորդը այլ նրա մայրը, սակայն վերջինս անդրդվելի էր և ինձ տրված իր մոր կողմից գումարը ետ էր ուզում: Ես մերժեցի նրան: Հարկ է արձանագրել որ մինչև օրս մեր մեջ կնքված 11.06.2014թ. փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիրը լուծված չի: Գարիկ Սահակյանս պայմանագրի մեջ որպես պատվիրատու հանդես եկող Ալիս Երվանդի Սարգսյանի կողմից պայմանագիրը լուծելու և վերջնահաշվարկ կատարելու վերաբերյալ, որևէ ծանուցում, դիմում, պահանջ չեմ ստացել: Մինչդեռ մեր մեջ կնքված 11.06.2014թ. պայմանագրով 5.3 կետի ուժով հստակ սահմանված է պայմանագրի վաղաժամկետ լուծելու կարգը ինչպես երկողմանի այնպես էլ միակողմանի, այսինքն մի կողմի նախաձեռնությամբ:*

*Գարիկ Սահակյանս պայմանագրով սահմանված կարգով կատարել եմ իմ պարտականությունը՝ այն է ներկայացրել եմ հակընդեմ հայց և մշտապես ժամանակին ներկայացել եմ նշանակված դատական նիստին, փոփոխված հայցապահանջի դեմ ներկայացրել եմ առարկություն մասնակցել եմ փորձաքննության ամբողջ ծավալով իրականացմանը, հանդիպել փորձագետին, մշտապես պատասխանել եմ տիկին Սարգսյանի զանգերին, ընդամենը մեկ անգամ չեմ պատասխանել, իսկ եթե ես մեկ կամ երկու անգամ չեմ պատասխանել ուրեմն եղել եմ դատական նիստի, հետո նոր եմ զանգել նրան: Նշեմ նաև, որ եղել են դեպքեր որ Ալիս Սարգսյանի բարեկամներն են ինձ զանգել հիմնականում իր դուստրը, որի զանգերը երբեմն մնացել են անպատասխան. ոչ նորմալ ժամի ինձ զանգելու համար»:*

Խորհրդի նիստին Պատասխանողն ըստ էության պնդելով նախապատրաստողի մոտ իր տված բացատրությունը, նշեց, որ ինքը, որպես մասնագետ, իրավաբան, նման փորձաքննության միջնորդություն չէր էլ ներկայացնի, քանի որ դրանքով կասկածի տակ է կդներ օրինական ուժի մեջ մտած վճիռը: Զանգերին պատասխանելու մասով հայտնեց, որ, որ ինքը միշտ պատասխանել է դիմողի հեռախոսազանգերին, իսկ մի դեպքում sms հաղորդագրություն է ուղարկել դիմողի դստերը, քանի որ հոգեհանգստի արարողության մասնակցելու համար գտնվել է Երևանից դուրս, այդ պահին հարմար չի եղել զանգին պատասխանել, մտածել է, որ դիմողը տարիքով մեծ է և հնարավոր է տեխնիկայի հետ խնդիրներ ունենա և չկարողանա հաղորդագրությունը կարդա, ինչի համար էլ այն ուղարկել է դստերը: Գումարի վերադարձման հետ կապված էլ հայտնեց, որ դիմողը երբեք իրենից գումար չի պահանջել, իրենց միջև կնքված պայմանագիրը չի լուծվել, իսկ նման պահանջ իրեն ներկայացրել է դիմողի դուստրը, որը պայմանագրի կողմ չէ և նման պահանջ ներկայացնելու իրավասություն չուներ:

**3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>**

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

**4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>**

22.12.2015թ. կարգապահական վարույթի գործը նախապատրաստողը կազմել է եզրակացություն, որի համաձայն Նախապատրաստողը նշել է, որ սույն կարգապահական գործով ապացուցման ենթակա փաստեր են համարվում ստորև նշված փաստերը.

***«ա) Փաստաբան Գարիկ Սահակյանը Դիմողին բարեխիղճ իրավական օգնություն ցույց չի տվել և չի ապահովել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը.***

- *Նշված փաստը պետք է ապացուցի Դիմող անձը:*
- *Վկայակոչված փաստը* ***հաստատված է*** *ստորև նշված ապացույցի հիման վրա.*

1) *Դիմողը նշել է, որ 13.03.2015 թվականին դատարանից ստացել է փաստաթուղթ (խոսքը գնում է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ «Դատատեխնիկական փորձաքննություն նշանակելու և գործի վարույթը կասեցնելու մասին» 10.03.2015թ. որոշման մասին), որտեղ փորձագետներին առաջադրված են եղել 5 հարցեր: Դիմողը տեղյակ է պահել Պատասխանողին նշված փաստաթուղթը ստանալու մասին, որի վերաբերյալ Պատասխանողը նույնպես տեղյակ է եղել:*

2) *Պատասխանողը նշել է, որ դատարանը սեփական նախաձեռնությամբ (ո՛չ թե հայցվորի և ո՛չ էլ պատասխանողի միջնորդությամբ) փորձաքննություն նշանակելու և գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ որոշումը կայացրել է դատական նիստի ընթացքում, ուստի դատավարական առումով գործի վարույթը կասեցնելուց հետո դատարանը ոչ մի միջնորդություն չէր քննարկելու, մինչև դրա կասեցման հիմքերի վերանալը: Տեսնելով, որ Դիմողը պնդում է ևս մեկ հարց, որը վերջինս ցանկանում էր ուղղել փորձագետին մինչև փորձաքննության ավարտը, Պատասխանողը 04.06.2015թ. դատարան է ներկայացրել միջնորդություն՝ լրացուցիչ փորձաքննություն նշանակելու մասին:*

3) *Պատասխանողի վերոնշյալ պնդումներին հակառակ, փորձաքննություն նշանակելու մասին որոշումը դատարանն ընդունել է հաշվի առնելով սկզբնական հայցվորի կողմից ներկայացված «դատատեխնիկական փորձաքննության մասին» միջնորդությունը և հարցերը (հիմք՝ ԿԳ/ 9, 11, 12), ինչպես նաև հողամասը ½ հարաբերակցությամբ առանձնացնելու մասին Պատասխանողի (որպես հակընդդեմ հայցվոր Դիմողի ներկայացուցչի) առաջադրված հարցը, որպիսի պայմաններում կարծում եմ, եթե Պատասխանողը Դիմողի հետ նախօրոք քննարկած լիներ վերջինիս հողամասի մուտքային մասում գտնվող ծխնիների տեղակայման վերաբերյալ հակընդդեմ հայցը բավարարելու համար էական նշանակություն ունեցող հարցը, դատական նիստին այն կարող էր առաջադրել փորձագետներին, դրանով իսկ փորձելով հիմնավորել վեճի առարկա հողամասի փաստացի տիրապետման փաստը Դիմողի կողմից,* ***ինչը չանելով Պատասխանողը սահմանափակել է հակընդդեմ հայցի պահանջների վերաբերյալ ապացույցներ ներկայացնելու Դիմողի իրավունքը****:*

***բ) Փաստաբան Գարիկ Սահակյանը խուսափել է Դիմողի հեռախոսազանգերին պատասխանելուց .***

- *Նշված փաստը պետք է ապացուցի Դիմող անձը:*
- *Վկայակոչված փաստը հաստատված չէ հետևյալ պատճառաբանությամբ.*

1) *Դիմումի համաձայն, Դիմողը բազմիցս զանգահարել է Պատասխանողին, որը կա՛մ չի պատասխանել զանգերին, կա՛մ էլ ասել է, որ զբաղված է: Համոզվելու համար, թե արդյո՞ք Պատասխանողն իրոք զբաղված է, Դիմողն ուրիշ համարից է զանգահարել է Պատասխանողն, սակայն այդ զանգին վերջինս անմիջապես պատասխանել է: Մի առիթով, երբ Դիմողը մի քանի անգամ շարունակաբար զանգել է Պատասխանողին, վերջինս հաղորդագրություն է ուղարկել Դիմողի դստերը. «Ես քաղաքում չեմ, մամայիդ ասա չզանգի» տեքստով:*

2) *Պատասխանողի գրավոր բացատրության համաձայն, վերջինս մշտապես պատասխանել է Դիմողի զանգերին, իսկ եթե մեկ կամ երկու անգամ չի պատասխանել, ապա դա պայմանավորված է եղել դատական նիստին մասնակցելու հանգամանքով :*

3) *Դիմողի կողմից վերոգրյալ պնդումը չի հիմնավորվել, մասնավրապես՝ չի ապացուցվել, որ Պատասխանողը խուսափել է Դիմողի հեռախոսազանգերին պատասխանելուց,* կանոնավորապես չի տեղեկացնել Դիմողին հանձնարարության կատարման ընթացքի մասին և չի պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:

***գ) Փաստաբան Գարիկ Սահակյանը Դիմողներին չի վերադարձրել ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարել.***

- *Նշված փաստը պետք է ապացուցի Դիմող անձը:*
- *Վկայակոչված փաստը հաստատված չէ հետևյալ պատճառաբանությամբ.*

1) *Կանոնագրքի 3.8.5 ենթակետի 1-ին պարբերության համաձայն՝ Պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է վստահորդին կամ պատվիրատուին վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ:*

2) *Դիմողը նշել է, որ փաստաբան Գարիկ Սահակյանի հետ կնքված պայմանագրով սահմանվել է 500 ԱՄՆ դոլարին համարժեք դրամի վճարում, որով Պատասխանողը խոստացել էր հարկ եղած դեպքում գործը հասցնել նաև վերաքննիչ և վճռաբեկ դատարան, սակայն գործը չի ավարտել նույնիսկ առաջին ատյանի դատարանում:*

3) *Դիմողի դուստրը տեղեկացրել է Պատասխանողին, որ չեն ցանկանում աշխատել Պատասխանողի հետ և առաջարկել է իր կատարած աշխատանքի դիմաց վերցնել համապատասխան գումար, իսկ չկատարածի համար վերադարձնել մնացած գումարը, սակայն Պատասխանողը համաձայնվել է վերադարձնել ընդամենը 35.000 ՀՀ դրամը :*

4) *Պատասխանողի գրավոր բացատրության համաձայն վերջինս մերժել է Դիմողի դստեր վերադարձնել գումարը պատճառաբանելով, որ նա չի հանդիսանում իր վստահորդը, ինչպես նաև արձանագրել է, որ մինչև օրս կողմերի միջև կնքված 11.06.2014թ. փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիրը լուծված չէ, քանի որ Դիմողի կողմից պայմանագիրը լուծելու և վերջնահաշվարկ կատարելու վերաբերյալ, որևէ ծանուցում, դիմում, պահանջ չի ստացվել, մինչդեռ 11.06.2014թ. պայմանագրի 5.3 կետով սահմանված է կողմերից մեկի նախաձեռնությամբ պայմանագրի վաղաժամկետ լուծելու կարգը՝ այն պետք է իրականացվի առնվազն երեք օր առաջ մյուս կողմին գրավոր ծանուցելու պայմանով, որպիսին չի կատարվել:*

5) *Դիմողի կողմից վերոգրյալ պնդումը չի հիմնավորվել, մասնավրապես՝ չի ապացուցվել, որ Դիմողը, կողմերի միջև 11.06.2014թ. կնքված պայմանագրի 5.3 կետով սահմանված կարգով, ծանուցել է Պատասխանողին պայմանագիրը դադարեցնելու (լուծելու) և գումարի համապատասխան մասը վերադարձնելու մասին»*:

Ամփոփելով, Նախապատրաստողը հաստատված է համարել (ա) ենթակետում նշված փաստը և հաստատված չի համարել (բ) և (գ) ենթակետերում նշված փաստերը:

25.12.2015թ. գործը հանձնվել է Խորհրդին:

Պատասխանողը 08.01.2016թ.-ին Պալատ է մուտքագրել առարկություն թիվ 15171 կարգապահական գործով եզրակացության դեմ, այն մասով, որով հաստատված է համարվել, որ Պատասխանողը բարեխիղճ իրավական օգնություն ցույց չի տվել:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2016 թվականի մարտի 1-ին, ժամը՝ 18:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

**5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>**

«Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

***Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, <u>www.datalex.am</u> կայքից թիվ ԵԱՔԴ/1655/02/14 քաղաքացիական գործի վերաբերյալ տեղեկատվությունը, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝***

1) Դիմող, թիվ ԵԱՔԴ/1655/02/14 քաղաքացիական գործով պատասխանող Ալիս Սարգսյանը և «Ռայթ Փրոթեքթ» ՍՊԸ-ն, որի տնօրեն հանդես է եկել պատասխանող, փաստաբան Գարիկ Սահակյանը, 11.06.2014թ-ն կնքել են փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր, որով պատասխանողը պետք է դատական ներկայացուցչություն իրականացներ համատեղ սեփականության ներքո գտնվող հողատարածքից բաժնեմասն առանձնացնելու պահանջի մասին գործի շրջանակներում:

2) Նշված գործը հարուցվել է հայցվոր Արծվիկ Մկրտչյանի կողմից 20.05.2014թ-ին Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան մուտք արած հայցի հիման վրա:

3) 20.06.2014թ-ին Դիմողի և Պատասխանողի անունից դատարան է մուտք արվել հակընդդեմ հայց ընդդեմ Արծվիկ Մկրտչյանի՝ Երևան քաղաքի Թավրիզյան փողոցի թիվ 71 հասցեի տան մուտքի համար նախատեսված դարպասն այժմյա գտնվելու վայրից տեղափոխելու և վճռով որոշված վայրում՝ նշված հասցեի մուտքի համար նախեստված ճակատային մասում տեղադրելու, համատեղ սեփականության իրավունքով կողմերին պատկանող 281.2քմ հողամասում հակընդդեմ հայցվորի բաժինը որոշելու և վերջինիս պատկանող բաժնեմասն առանձնացնելու պահանջների մասին: Հակընդդեմ հայցն ընդունվել է վարույթ:

4) Առկա է 04.03.2015թ. թվագրմամբ պատասխանողի ստորագրությամբ հայցի հիմքը և առարկան փոփոխելու ավելացնելու պահանջի վերաբերյալ պատասխան:

5) Դատարանը 10.03.2015թ-ին որոշում է կայացրել «Դատատեխնիկական փորձաքննություն նշանակելու և գործի վարույթը կասեցնելու մասին»:

6) 04.06.2015թ-ին Պատասխանողը լրացուցիչ փորձաքննություն նշանակելու մասին միջնորդություն է ներկայացրել առաջարկելով փորձագետին առաջադրել հետևյալ հարցը՝ արդյոք ք. Երևան Թավրիզյան փողոցի 71 տան հողամասի մուտքի դիմային հատվածում առկա է դարպասի :

7) 04.06.2015թ-ին կազմվել է փորձագետի եզրակացությունը:

8) 08.06.2015թ. որոշմամբ դատարանը գործի վարույթը վերսկսել է:

9) 09.07.2015 թվականին նշանակված նախնական դատական նիստում Ա. Սարգսյանի նոր ներկայացուցչի կողմից դատարան է ներկայացվել հակընդդեմ հայցի առարկան և հիմքը փոխելու վերաբերյալ դիմում, որով վերջինս խնդրել է Երևան քաղաքի Թավրիզյան 71 հասցեի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով 281.2քմ մակերեսով հողատարածքում առանձնացնել Ալիս Սարգսյանի 1/2 բաժնեմասը, Ա. Մկրտչյանին վտարել վիճելի հողամասի՝ Ա. Սարգսյանին պատկանող 1/2 մասից և այդ մասի նկատմամբ ճանաչել վերջինիս միանձնյա սեփականության իրավունքը: Փոփոխություններն ընդունվել է վարույթ:

10) Դատարանը 09.10.2015թ.-ին կատարել է ապացույցների, դրանց գտնվելու վայրում, զննություն (տեղատեսություն):

**6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>**

Փաստաբանների պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 29.02.2016թ. տրված տեղեկանքի համաձայն փաստաբան Գարիկ Սահակյանը փաստաբանական գործունեության թիվ 1740 արտոնագիրը ստացել է 06.10.2013թ. և 2013-2016թթ. Ընկած ժամանակահատվածում նրա նկատմամբ կարգապահական վարույթներ չեն հարուցվել:

**7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>**

Նկատի ունենալով այն, որ կարգապահական վարույթը հարուցվել է՝ փաստաբան Գարիկ Սահակյանի կողմից՝

– Դիմողին բարեխիղճ իրավական օգնություն ցույց չտալու (ձեռնհասություն չցուցաբերելու), հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը չապահովելու (Կանոնագրքի 2.7.2, 3.1.8, 3.5.5 ենթակետեր),

– Դիմողի հեռախոսազանգերի և նրան հետաքրքրող հարցերին չպատասխանելու (Կանոնագրքի 3.6.1 ենթակետ) և

– Դիմողի գործով փաստացի չկատարած աշխատանքի մասով պայմանագրով ստացած հոնորարը չվերադարձնելու (Կանոնագրքի 3.8.5(1) ենթակետ) վարքագիծը ստուգելու նպատակով,

Խորհուրդը Պատասխանողի վարքագիծը ստուգում է հարուցված կարգապահական վարույթի շրջանակներում:

*Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Գարիկ Սահակյանի վերաբերյալ կարգապահական գործի վարույթը*՝ Փաստաբանի վարքագծի Կանոնագրքի 2.7.2, 3.1.8, 3.5.5, 3.6.1 և 3.8.5 (1) ենթակետերի խախտման հատկանիշներով, *ենթակա է կարճման, հետևյալ պատճառաբանությամբ.*

Կանոնագրքի **2.7.2** ենթակետի համաձայն՝ ***փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման***

***համար անհրաժեշտ գործողությունների կատարում:***

Կանոնագրքի **3.1.8** ենթակետը սահմանում է, որ ***փաստաբանն իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունը չպետք է ընդունի, եթե զբաղվածության կամ որևէ այլ պատճառով չի կարող ապահովել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը:***

Կանոնագրքի **3.5.5** ենթակետի համաձայն՝ ***փաստաբանը պարտավոր է ժամանակին, գիտակցաբար և ջանասիրաբար խորհուրդ տալ և պաշտպանել իր վստահորդին և հանդես գալ նրա անունից:***

Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Գարիկ Սահակյանը Կանոնագրքի 2.7.2, 3.1.8, 3.5.5 ենթակետերի խախտում թույլ չի տվել, քանի որ լրացուցիչ հարցով փորձաքննության միջնորդություն ներկայացրել է դատարանին, թեև ինքն էլ պնդեց, որ դրան դեմ է եղել և այդ միջնորդությունը ներկայացրել է բացառապես Դիմողի պնդմամբ: Ավելին, դիմողի կողմից հակընդդեմ հայցում փոփոխություն կատարելուց հետո ընդհանրապես իմաստազրկվում էր նշված փորձաքննության անհրաժեշտությունը, առավել ևս, որ դատարանը կատարել է ապացույցները տեղում զննելու դատավարական գործողություն (տեղատեսություն) և Դիմողի հայտարարությունը, դարպասի նախկին տեղի մասին դատարանի կողմից արձանագրվել է և տեղ է գտել նաև վճռում:

Կանոնագրքի **3.6.1** ենթակետի համաձայն՝ ***փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:***

Կանոնագրքի 3.6.1 ենթակետի խախտման հետ կապված Խորհուրդը հիմք է ընդունում գործը նախապատրաստողի եզրակացության՝ Դիմողի կողմից չառարկված, ինչպես նաև սույն որոշմամբ հաստատված փաստերը և գտնում է, որ փաստաբան Գարիկ Սահակյանի կողմից նշված դրույթի խախտում թույլ տալը չհաստատվեց, մասնավորապես, դիմողը նշելով, որ Պատասխանողը չի պատասխանել իր հեռախոսազանգերին, այդ փաստը հաստատող որևէ ապացույց չի ներկայացրել, իսկ պատասխանողն էլ չընդունեց այդ փաստը, նշելով, որ ինքը միշտ պատասխանել է Դիմողի հեռախոսազանգերին: Ինչ վերաբերում է այն դեպքին, երբ Դիմողի հեռախոսազանգին չպատասխանելով Պատասխանողը դրա պատճառի մասին Դիմողի դստերն է sms հաղորդագրություն ուղարկել, ապա դա Խորհուրդի կողմից չի դիտարկվում որպես Կանոնագրքի 3.6.1 ենթակետի խախտում, հիմք ընդունելով նաև պատասխանողի բացատրությունները:

Կանոնագրքի 3.8.5 ենթակետի 1-ին պարբերության համաձայն՝ ***Պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է վստահորդին կամ պարվիրատուին վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ:***

Կանոնագրքի 3.8.5(1) ենթակետերի խախտման հետ կապված Խորհուրդը հիմք է ընդունում գործը նախապատրաստողի եզրակացության՝ Դիմողի կողմից չառարկված, ինչպես նաև սույն որոշմամբ հաստատված փաստերը և գտնում է, որ փաստաբան Գարիկ Սահակյանը նշված դրույթի խախտում թույլ չի տվել, քանի որ Դիմողը իր դիմումում չի նշել, ինչպես նաև որևէ ապացույց չի ներկայացրել այն մասին, որ 11.06.2014թ. փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիրը լուծվել է: Պատասխանողն իր հերթին հայտնեց, որ պայմանագիրը լուծված չէ, իսկ իրենից գումար պահանջել է Դիմողի դուստրը, որը պայմանագրի կողմ չէ:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14–րդ կետի, 39.7.-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, ՀՀ «Փաստաբանների պալատի կանոնադրության»

16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջներով Խորհուրդը՝

***Ո Ր Ո Շ Ե Ց՝***

***1. Փաստաբան Գարիկ Սահակյանի (արտոնագիր թիվ 1740) նկատմամբ «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.7.2., 3.1.8, 3.5.5., 3.8.5 (1) ենթակետերի, պահանջների խախտման հիմքով հարուցված թիվ 15171 կարգապահական վարույթը կարճել՝ կարգապահական խախտման դեպքի բացակայության հիմքով:***

***2. Փաստաբան Գարիկ Սահակյանի (արտոնագիր թիվ 1740) նկատմամբ «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 3.6.1. ենթակետի պահանջների խախտման հիմքով հարուցված թիվ 15171 կարգապահական վարույթը կարճել՝ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը հիմնավորված չլինելու հիմքով:***

***3. Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:***

***<u>Ծանոթություն.</u>*** *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Կարեն Մեժլումյան